378(450) *https://orcid.org/0009-0009-2851-0559* **DOI:10.46991/educ-21st-century.v5.i1.228**

FEATURES OF THE PROCESS OF ENSURING THE QUALITY OF ITALIAN HIGHER EDUCATION

Kristine Safaryan
lecturer
YSU, Armenia
Qristine.safaryan@ysu.am

Summary

Italy actively participates in the process of forming the European Higher Education Area, successfully implements an internationalization strategy, while maintaining the characteristics of national education.

The modern system of quality assurance of higher education in Italy includes the state and public structures interested in the quality of education, the quality management of the universities themselves and the mechanisms of interaction with pan-European agencies.

Each Italian university has a quality assessment department that independently monitors the quality assessment processes of educational programs, and the quality of higher education educational programs is considered a national priority.

The Ministry of Education, Universities and Science established the National Institute for the Evaluation of the Higher Education System (INVALSI, Instituto Nazionale per la Valutazione del Sistema dell'Istruzione) for the activities of the university units for the control of the quality of education. In 1999, a special intermediary organization, the National Committee for the Evaluation of the Higher Education System (CNVSU), was created, whose task is to verify the conformity of the level of Italian higher education with pan-European standards.

Other public bodies also participate in the process of quality assessment of education, such as the National Council of Universities (Consiglio Universitario Nazionale - CUN), the Conference of Rectors of Italian Universities CRUI (Conferenza dei Rettori delle Università Italiane), the National Committee for Quality Assessment of Italian Universities - CONVUI (Coordinamento Nazionale dei Nuclei di Valutazione delle Università Italiane), National Student Council - (Consiglio Nazionale degli Studenti Universitari – CNSU).

The state defines the minimum standards of accreditation developed for educational programs, which contain border concepts of recognition of the quality of educational programs.

Keywords: Italian higher education system, quality of education, quality assurance process, assessment of the quality of education, accreditation.

ОСОБЕННОСТИ ПРОЦЕССА ОБЕСПЕЧЕНИЯ КАЧЕСТВА ИТАЛЬЯНСКОГО ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ

Сафарян Кристине
преподаватель
ЕГУ, Армения
Qristine.safaryan@ysu.am

Аннотация

Италия активно участвует в процессе формирования Европейского пространства высшего образования, успешно реализует стратегию интернационализации, сохраняя при этом черты национального образования.

Современная система обеспечения качества высшего образования в Италии включает в себя государственные и общественные структуры, заинтересованные в высоком качестве образования, управление качеством самих вузов и механизмы взаимодействия с общеевропейскими агентствами.

В каждом итальянском университете есть отдел оценки качества, который самостоятельно контролирует процессы оценки качества образовательных программ, а качество образовательных программ высшего образования считается национальным приоритетом.

Министерство образования, университетов и науки Италии учредило Национальный институт оценки системы высшего образования (INVALSI, Instituto Nazionale per la Valutazione del Sistema dell'Istruzione) для деятельности подразделений университета по контролю качества образования. В 1999 году была создана специальная посредническая организация – Национальный комитет по оценке системы высшего образования (CNVSU), задачей которой является проверка соответствия уровня высшего образования в Италии общеевропейским стандартам.

В процессе оценки качества образования участвуют и другие государственные органы, такие как Национальный совет университетов (Consiglio Universitario Nazionale – CUN), Конференция ректоров итальянских университетов CRUI (Conferenza dei Rettori delle Università Italiane), Национальный комитет по Оценка качества итальянских университетов – CONVUI (Coordinamento Nazionale dei Nuclei di Valutazione delle Università Italiane), Национальный студенческий совет – (Consiglio Nazionale degli Studenti Universitari – CNSU).

Государство определяет минимальные стандарты аккредитации, разработанные для образовательных программ, которые содержат пограничные понятия определения качества образовательных программ.

Ключевые слова: итальянская система высшего образования, качество образования, процесс обеспечения качества, оценка качества образования, аккредитация.

ԻՏԱԼԻԱՅԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սաֆարյան Քրիստինե
դասախոս
ԵՊՀ, Հայաստան
qristine.safaryan@ysu.am

Համառոտ ներածական: Սույն հոդվածում ներկայացվում են Իտալիայի բարձրագույն կրթության համակարգի որակի ապահովման, հավատրամագրման գործընթացների, վերահսկում իրականացնող պետական մարմինների գործունեության առանձնահատկությունները:

Հիմնախնդիրը: Իտալիայի բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացի ուսումնասիրությունը հնարավորություն կտա դուրս բերելու և ներկայացնելու ողջ գործընթացի կառուցվածքային ու բովանդակային առանձնահատկությունները:

Հոդվածի նպատակը: Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել Իտալիայի բարձրագույն կրթության համակարգի որակի ապահովման գործընթացի առանձնահատկությունները:

Հոդվածի նորույթը: Հոդվածի նորույթն այն է, որ ՀՀ-ում առաջին անգամ է իրականացվում Իտալիայի բարձրագույն կրթության համակարգի որակի ապահովման գործընթացի համապարփակ ուսումնասիրություն:

Հետազոտության տեսական նշանակությունը: Ուսումնասիրված և ներկայացված են որակի ապահովման գործընթացի հիմք հանդիսացող իրավական փաստաթղթեր, ինչպես նաև տարբեր հեղինակների մոտեցումները՝ որակի ապահովման գործընթացների վերաբերյալ:

Հետազոտության գործնական նշանակությունը: Կատարված հետազոտությունը հիմք կհանդիսանա թեմային շրջանակում առավել խորը հետազոտության իրականացման համար:

Բանալի բառեր: Իտալիայի բարձրագույն կրթության համակարգ, կրթության որակ, որակի ապահովման գործընթաց, կրթության որակի գնահատում, հավատարմագրում:

Հիմնական նյութի շարադրանքը: Անկախ այն հանգամանքից, որ յուրաքանչյուր երկիր ունի կրթության համակարգի ազգային առանձնահատկություններ, որոնք արտահայտվում են գնահատման նպատակների, խնդիրների ու տեխնոլոգիաների գնահատող սուբյեկտների կազմի բազմազանությամբ, Բոլոնյան գործընթացի շրջանակում ձևավորվել են որոշակի ընդհանուր միտումներ, մասնավորապես.

- կրթության որակի գնահատման բաժանում արտաքին և ներքին բաղադրիչների,
- բուհերի ակադեմիական ու հետազոտական գործունեության կենտրոնացված վերահսկողության կրճատում և դրանց ինքնավարության ու պատասխանատվության ընդլայնում,
- բարձրագույն կրթության որակի գնահատման անկախ մարմնի առկայություն,
- գնահատման գործընթացում ուսանողների լիիրավ մասնակցություն:

Այս տեսանկյունից կարևորում ենք Իտալիայի կրթության համակարգի որակի ապահովման գործընթացի և դրա առանձնահատկությունների ուսումնասիրումն ու ներկայացումը:

Իտալիան ակտիվորեն մասնակցում է Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի ձևավորման գործընթացին, բարեհաջող իրականացնում է միջազգայնացման ռազմավարություն, միաժամանակ պահպանում է ազգային կրթության առանձնահատկությունները, և ըստ Ջ. Ռոջերոյի՝ միակ երկրին է, որն անմիջապես սկսել է ներդնել Բոլոնյան գործընթացի դրույթները՝ առանց նախնական փորձարկումների [1]:

Իտալիայի բարձրագույն կրթության որակի ապահովման ժամանակակից համակարգը ներառում է կրթության որակով հետաքրքրված պետական ու հասարակական կառույցները, հենց համալսարանների որակի կառավարումը և համաեվրոպական գործակալությունների հետ փոխազդեցության մեխանիզմները: Այն ձևավորվել է ներքոհիշյալ գործոնների ազդեցությամբ:

1. Բարձրագույն կրթության տարածաշրջայնացում և տարածաշրջանային զարգացման գործում բուհերի դերի բարձրացում: Սկսած 90-ական թթ. վերջից՝ համալսարանների կառավարման գործառույթի զգալի մասը դրվել է մարզերի կրթության կառավարման մարմինների վրա: Իտալիայի կրթության, համալսարանների և գիտության նախարարությունը (Ministero dell'Istruzione, dell'Università e della Ricerca, MIUR) պատասխանատու է բարձրագույն կրթության համակարգի կառավարման ռազմավարական աստիճանի և այլ երկրների հետ փոխազդեցության ապահովման համար:

2. Համալսարանների ինքնավարության աճ, ինչի համար էական խթան է եղել Բեռլինի կոմյունիկեն (2003), որում նշված էր, որ բարձրագույն կրթության որակի ապահովման համար պատասխանատվությունն առաջին հերթին դրվում է հենց համալսարանների վրա, դրանով իսկ յուրաքանչյուր պետության սահմաններում ստեղծվում է ակադեմիական համակարգի իրական պատասխանատվության բազա:

Է. Մինելլին, Գ. Ռեբորան, Մ. Տուրրին Իտալիայի կրթության համակարգում որակի գնահատման համակարգի ձևավորման սկիզբ են համարում 1994 թվականը, երբ երկրի կառավարության կողմից ընդունվել է օրենք, որի համաձայն՝ որակի ապահովման

գործընթացը համակարգելու նպատակով յուրաքանչյուր բուհ պետք է ստեղծեր որակի ապահովման ներքին խմբեր (Nucleo di valutazione) [5, էջ 68-74]:

Պայմանավորված համալսարանների ինքնավարության աճով՝ իտալական բարձրագույն կրթության որակի գնահատման համակարգը հիմնվում է ինքնագնահատման վրա: Սկսած 1996 թվականից՝ Իտալիայի յուրաքանչյուր բուհում ստեղծվել է որակի գնահատման դեպարտամենտ, որն ինքնուրույն վերահսկում է կրթական ծրագրերի որակի գնահատման գործընթացները:

Կրթության որակի վերահսկման համալսարանական ստորաբաժանումների գործունեության համար Կրթության, համալսարանների և գիտության նախարարության կողմից ստեղծվել է բարձրագույն կրթության համակարգի գնահատման Ազգային ինստիտուտը (INVALSI, Instituto Nazionale per la Valutazione del Sistema dell'Istruzione):

Ազգային ինստիտուտի գլխավոր խնդիրներից են.

- որակի գնահատման միասնական մեթոդների ու գործընթացների մշակում,
- համալսարանների գործունեության որակի ամենամյա մշտադիտարկում՝ հատուկ մշակված ցուցիչներով,
- համալսարանների կողմից ամեն տարի տրամադրվող կրթական ծրագրերի որակի գնահատման հաշվետվությունների վերլուծություն և դրանց հիման վրա ազգային հաշվետվության նախագծի մշակում,
- գիտական աստիճան ստանալուն միտված նոր կրթական ծրագրերի ներմուծման առաջարկների մշակում,
- ինչպես համալսարանների, այնպես էլ գիտահետազոտական կազմակերպությունների կողմից իրականացվող հետազոտական նախագծերի որակը վերահսկվում է Հետազոտական գործունեության որակի գնահատման կոմիտեի կողմից:

Իտալիան ընդգրկված է *Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ցանցի* (European Network for Quality Assurance in Higher Education) կազմում: 1999 թ. ստեղծվել է հատուկ՝ բարձրագույն կրթության համակարգի գնահատման Ազգային կոմիտե միջնորդ կազմակերպությունը (CNVSU), որի խնդիրը իտալական բարձրագույն կրթության մակարդակի՝ համաեվրոպական չափանիշներին համապատասխանության ստուգումն է:

Իտալիայի համար բարձրագույն կրթության կրթական ծրագրերի որակը ազգային առաջնահերթություն է:

1999 թ. հոկտեմբերի 19-ի թիվ 370 օրենքը ներկայացնում է արդեն գործող գնահատման խմբերի գործառույթները և հաստատում նոր ձևավորվող բարձրագույն կրթության որակի համակարգի՝ Ազգային կոմիտեի (Comitato Nazionale di Valutazione di Valutazione del Sistema Universitario, CNVSU)՝ որպես Կրթության, համալսարանների և գիտական հետազոտությունների նախարարության խորհրդատվական կոմիտեի ստեղծումը:

CNVSU-ի խնդիրներն են.

- համալսարանների արտաքին գնահատման և ինքնագնահատման մեթոդների ընդհանուր չափանիշների որոշումը, գնահատման մեթոդաբանության տարածումը,
- բարձրագույն կրթության համակարգի արդյունքների գնահատման ամենամյա հաշվետվության պատրաստումը,
- փորձարարության խրախուսումը, գնահատման ոլորտում մեթոդաբանության և պրակտիկայի կիրառումն ու տարածումը և այլն:

Մինչև 2008 թվականի վերջը համալսարանների հետազոտական գործունեությունը գնահատում էր 1998 թ. հիմնված Guidance Committee for the Evaluation of Research (CIVR)-ը:

CNVSU-ն ու CIVR-ն, իրենց պաշտոնական կայքէջերում մշտապես նորացնելով տեղեկատվությունը նախագծերի, միջոցառումների, գնահատման արդյունքների վերաբերյալ, իրականացնում էին հետաքրքրված անձանց հրապարակային իրազեկում: Համալսարանների գործունեության ամենամյա հաշվետվությունների գնահատումը պաշտոնապես ներկայացված ու հասանելի է եղել առցանց տիրույթում:

2006-2009 թթ. ընթացքում տեղի ունեցավ կառույցների միավորում՝ ձևավորելով մեկ անկախ՝ համալսարանների ու հետազոտական ինստիտուտների գնահատման Ազգային գործակալություն (Agenzia Nazionale per la Valutazione del Sistema Universitario e della Ricerca, ANVUR): Գործակալության առաքելությունը բարձրագույն կրթության և հաստատությունների հետազոտական գործունեության որակի անկախ գնահատումն է, այդ թվում՝ միջազգային հետազոտությունների շրջանակում:

ANVUR-ի հիմնումը եվրոպական չափանիշների համապատասխանության գործում կարևոր է քայլ է: Հատկապես կարևոր է այն հանգամանքը, որ նոր գործակալությունը զարգացնում է կրթության որակի արտաքին գնահատումը՝ հիմնվելով ոչ թե քանակական, այլ որակական ցուցանիշների վրա:

ANVUR-ը պատասխանատվություն է կրում.

- այն բոլոր բուհերի ու գիտահետազոտական հաստատությունների գործունեության որակի արտաքին գնահատման համար, որոնք ստանում են տարեկան պլանի վրա հիմնված պետական ֆինանսավորում,
- համալսարաններում և հետազոտական հաստատություններում ներքին գնահատման գործընթացների համակարգման ու վերահսկման համար,
- հետազոտությունների և նորարարությունների խթանմանն ու ֆինանսավորմանն ուղղված պետական ծրագրերի արդյունավետության գնահատման համար:

ANVUR-ի գնահատման արդյունքները նաև հիմք են հանդիսանում բուհերին ու գիտական կազմակերպություններին պետական ֆինանսավորում տրամադրելու համար:

Կրթության որակի գնահատման գործընթացին մասնակցում են նաև պետական այլ մարմիններ, մասնավորապես.

- Համալսարանների ազգային խորհուրդը (Consiglio Universitario Nazionale, CUN), որը ներկայացնում է համալսարանների շահերը Իտալիայի կրթության, համալսարանների և գիտության նախարարությունում:
- Իտալական համալսարանների ռեկտորների համաժողովը (Conferenza dei Rettori delle Università Italiane, CRUI), որը համալսարանական ինքնավարությունը ներկայացնող մամին է, որի առաքելությունն է պետության ու համալսարանների գործունեության համակարգումը բարձրագույն կրթության համակարգի առանցքային այնպիսի խնդիրների լուծման գործում, ինչպիսիք են աջակցությունը համալսարանների ինքնավարությանը, եվրոպական կրթական տարածք ինտեգրմանը, համալսարաններում նորարարությունների ներմուծմանը և այլն:
- Իտալական համալսարանների որակի գնահատման ազգային կոմիտեն (Coordinamento Nazionale dei Nuclei di Valutazione delle Università Italiane, CONVUI) մարմին է, որը միավորում է ներհամալսարանական որակի գնահատման խմբերը (NVA (Nucleo di valutazione)), համակարգում է դրանց գործունեությունը, գնահատման

խմբերին թույլ է տալիս փոխանակվել փորձով ու կոնսոլիդացված տեսակետ արտահայտել կրթության որակի պատասխանատու այլ մարմինների հետ փոխգործակցելիս:

- Ազգային ուսանողական խորհուրդը (Consiglio Nazionale degli Studenti Universitari, CNSU) խորհրդատվական մարմին է, որի գործունեությունն ուղղված է Իտալիայի համալսարաններում կրթության որակի և պայմանների վերաբերյալ ուսանողության կարծիքի ընդհանրացմանը և ստացված տեղեկատվությունը նախարարություն հասցնելուն:

Մինչև Բոլոնյան բարեփոխումները բարձրագույն կրթության որակն ապահովվում էր կրթական ծրագրերի խիստ կանոնակարգմամբ: Կանոնակարգվում էին անգամ կրթական ծրագրի անվանումն ու առանձին դասընթացների բովանդակությունը: Նպատակն ամբողջ երկրում կրթական ծրագրերի ստանդարտիզացումն էր, ինչը թույլ էր տալիս դրանք չհավատարմագրել: Ստանդարտիզացված ծրագիրն ինքնին համարվում էր նախարարության կողմից հավատարմագրված [2, էջ 94-95]:

Մասնագիտացված կամ ըստ կրթական ծրագրերի հավատարմագրման համակարգը, որը ենթադրում էր ոչ թե հաստատության, այլ առանձին կրթական ծրագրի հավատարմագրում, Իտալիայում սկսել է իրականացնել 2001 թվականից: Գնահատման արդիականությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ համալսարանները մշակում էին բազմաթիվ նոր կրթական ծրագրեր և ֆինանսավորման համար դիմում Կրթության նախարարություն, որի համար կարևոր էր ներդրումների արդյունավետության կանխորոշումը: Եթե կրթական ծրագրի գնահատումը դրական է, ապա հավատարմագրման ժամկետն ինքնաբերաբար երկարաձգվում է մինչև ինստիտուցիոնալ հավատարմագրման ավարտը: Հակառակ դեպքում հավատարմագրումը չեղյալ է հայտարարվում, իսկ ծրագիրը դադարում է գործել նախարարի հրամանով [4, էջ 13]:

Բացի դրանից՝ Իտալիայի կրթության համակարգին անհրաժեշտ էր լուծել հետևյալ խնդիրները.

- հաղթահարել որակի նկատմամբ իտալական համակարգին բնորոշ ֆորմալ վերաբերմունքը, որը հիմնված է որակավորումների իրավական ուժի վրա,
- ստեղծել կրթության որակի ապահովման հստակ և թափանցիկ համակարգ, որը թույլ է տալիս կրթության ոլորտում ներդրումներ կատարող շահագրգիռ անձանց երաշխավորել կրթական ծրագրերի ընտրության ռացիոնալության բարձր մակարդակ,
- ստեղծել մրցակցային միջավայր՝ որպես կրթական ծառայությունների շուկայում առաջարկների քանակի և որակի աճին նպաստող գործոն,
- նպաստել համալսարանների ներսում որակի շարունակական բարելավմանը:

Հավատարմագրման CNVSU համակարգը ստեղծվել է հավատարմագրման՝ որպես հաստատության կամ ծրագրի որակի հավատարմագրման պաշտոնապես հրապարակված հաստատում, որը հետևում է համաձայնեցված չափանիշներին համապատասխանության պարբերական գնահատմանը: Հավատարմագրման մոդելը հիմնվում էր արտաքին օգտվողների պահանջներին (fitness of purpose) կրթական ծրագրերի նպատակների համապատասխանության որոշման և կրթական ծրագրերի՝ այդ նպատակներին (Finocchetti) հասնելու վրա: Իտալիայում բոլոր կրթական ծրագրերը պայմանականորեն բաժանվում են, այսպես կոչված, դասերի (42 դաս բակալավրի աստիճանի համար և 104՝ մագիստրոսի աստիճանի համար): Յուրաքանչյուր դասի կրթական ծրագրերի իրականացման պայմաններին ներկայացվող ինստիտուցիոնալ խնդիրներն ու նվազագույն պահանջները որոշվում են պետական նորմատիվ փաստաթղթերով:

Այդպիսով, պետությունը սահմանում է CNVSU-ի կողմից յուրաքանչյուր դասի կրթական ծրագրերի համար մշակված նվազագույն չափորոշիչները [2, էջ 95-96]:

Չափորոշիչները պարունակում են կրթական ծրագրերի որակի ճանաչման սահմանային հասկացություններ: Ինչպես նշում է Ց. Բուոնաուրան, «սա հավատարմագրման շատ պարզ ձև է, որը հիմնված է չափորոշիչներին համապատասխանելու կամ չհամապատասխանելու վրա» [3, էջ 54]:

Եզրակացություն: Ուսումնասիրելով Իտալիայի բարձրագույն կրթության համակարգի որակի ապահովման գործընթացի առանձնահատկությունները Բոլոնյան գործընթացից առաջ և հետո՝ կարող ենք ասել, որ իրականացվել են մի շարք բարեփոխումներ, որոնք միտված են եղել ինչպես բարձրագույն կրթության որակի ապահովմանը, այնպես էլ Եվրոպական կրթական տարածք ինտեգրվելու նախանշված նպատակների իրականացմանը: Բարեփոխումների շրջանակում ձևավորվել են որակի ապահովման և վերահսկման, բարձրագույն կրթության որակի շարունակական բարելավմանը նպաստող համապատասխան կառույցներ՝ հստակ սահմանված գործառույթներով:

Օգտագործված գրականության ցանկ

1. Роджеро Д., Из руин в кризис: об основных трендах в жизни глобального университета // Неприкосновенный запас. №3 (77), 2011.
2. Ягудина Л. Р., Оценка качества высшего образования в Италии, Вестник ТГПУ (TSPU Bulletin). 2013. 9 (137).
3. Buonaura C. C., Nauta P. D. An approach to accreditation: The path of the italian higher education // Accreditation Models in Higher Education: Experiences and Perspectives. ENQA Workshop Reports 3. Helsinki, 2004. P. 51–55. URL: http://www.enqa.eu/fifi les/ENQAmodels.pdf.
4. ENQA agency review: Italian national agency for the evaluation of universities and research institutes (ANVUR), Tue Vinther-Jorgensen, Laura Beccari, Maria Del Mar Campins Eritja, Ingas Gaiziunas, 20 june 2019.
5. Minelli E., Rebora G., Turri M. The fifteen year evaluation experience in Italian universities with its crisis factors and a desire for Europe // Implementing and Using Quality Assurance: Strategy and Practice: a Selection of Papers from the 2 European Quality Assurance Forum. 15-17 November 2007. Belgium: European University Association, 2008.

Получено: 27.03.2023 *Received: 27.03.2023*
Рассмотрено: 04.04.2023 *Reviewed: 04.04.2023*
Принято: 11. 04. 2023 *Accepted: 11. 04. 2023*

Journal ''Education in the 21st Century'', Vol1-9/1/, 2023

This work is licensed under a Creative Commons Attribution-Non Comercial 4.0 International License